

2882

491.99-5  
U-47

y-3 x13

w 299



010

491.99-5

Մ 47

1044

425 *ւր*

87-ՄԵ

**ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ**

**ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ**

(ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ)



1004  
16414

**ԿԱԶՄԵՑ Ն. ՍԵՆԻՔ-ԹԱՆԳԵԱՆ.**



2002

ՇՈՒՇԻ

Տպագան Մ. Մահարեան-Յանով Բեռնցի.

1893





Որովհետև այժմեան աշխարհաբար քերականութիւնները չեն կարողանում իբրև ձեռնարկ ծառայել աշակերտների ձեռքում աշխարհաբար լեզու լաւ սովորելու համար, ուստի անհրաժեշտ պէտք է զգացուամ մի այնպիսի ձեռնարկ ունենալ, որով՝ աշխարհաբարում գործածուած գլխաւոր ձևերը, կանոնները դիւրութեամբ կարելի լինի աւանդել աշակերտներին և սովորեցնել:

Աշխարհաբարը զարգացման աստիճանի վերայ գտնուելով, նորանոր մշակած ձևեր, ժամանակներ մտցնելով իւր մէջ, իբրև կանոն ընդունուում են, այն ինչ անցեալներում կազմուած քերականութիւնների մէջ չկան այդ ձևերը:

Օր. այժմ գործածուող Պալասանեանի աշխարհաբար քերականութեան մէջ, բայերի շատ ժամանակներ չկան կամ երկրորդական տեղ են բռնում, լծորդութիւնները փոխուած են և: Այս և մի քանի այլ կէտեր ՚ի նկատի ունենալով սուղ ժամանակում կազմում ենք հետևեալ դասագիրքը, որի Ա.—մասը՝ ստուգաբանութիւնը ա. դասարանի (դ.—բաժանմունքի) դասընթաց է, (Բ.—մասն՝ համաձայնութիւնը բ.—դասարանի (ե.—բաժանմունքի) դասընթաց է:

Ուսուցիչը կարող է Պ.—բաժանմունքի համար օգտուել դասագրքից, բայց ո՛չ աշակերտներին տալ: Է. տաքքրքիրների և թեմական դպրանոցների գ.—դասարանի աշակերտների համար հարկաւոր է լինում համեմատել Տաճկահայոց և Ռուսահայոց աշխարհաբարը, իբրև համեմատութեան գլխաւոր կէտեր, նմուշներ հաւելուածում առաջ է բերուած Տաճկահայոց հոլովների և խոնարհումների ձևերը: Չեռնարկս կազմելիս ՚ի նկատի առնուած է գլխաւորապէս Այտինեանի քերականութիւնը և հայոց ու ռուսաց գործածուող ձեռնարկները:

Ն. Մելիք-Թանգ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՑՈՒՄԸ:

1. Քերականութիւնը մի արուեստ է, ուսմունք է, որ սովորեցնում է մի լեզուով կանոնաւոր խօսելու, ուղիղ գրելու և կարգալու կանոնները:
2. Հայոց լեզուն ունի երկու քերականութիւն, գրաբարի և և աշխարհաբարի:
3. Աշխարհաբարի քերականութիւնը մեզ սովորեցնում է աշխարհիկ լեզուով կանոնաւոր խօսելու և ուղիղ կարգալու գրելու կանոնները: Սա բաժանուած է երկուսի, Տաճկահայոց և Ռուսահայոց բարբառների քերականութեան, որոնք որոշ մասերում տարբերում են միմիանցից:
4. Աշխարհաբարի քերականութիւնը բաժանուած է երկու գլխաւոր մասի. Ստուգաբանութեան և Համաձայնութեան:
5. Ստուգաբանութիւնը քերականութեան այն մասն է, որ պարագում է նախադասութիւնների և սորա բառերի կազմութեան կանոններով, նշանակութեամբ, նոցա զանազան մասերի բաժանմամբ և դասաւորութեամբ:
6. Համաձայնութիւնը քերականութեան այն մասն է, որ պարագում է նախադասութիւնների, բառերի կազակցութեան կանոններով, միմեանց հետ ունեցած և ունենալիք յարաբերութեամբ և համաձայնութեամբ:

... (faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through or a second column of text)

Ս). ՆՍԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

1. Եթէ արտասանենք մի քանի բառեր առանց միմեանց հետ համաձայնեցնելու, այն ժամանակ մի միտք՝ մի խօսք չենք հասկանալ, միայն բառեր կլսենք: Օր. արև, շուն, գնաց: Այս երեք բառերը ջոկջոկ արտասանած մի միտք չեն արտայայտում:
2. Եթէ նոյն բառերը անկապ չ'ընդնենք, միմեանց հետ համաձայնեցնենք, այն ժամանակ մի միտք կ'հասկանանք, կ'իմանանք ինչի համար է խօսում: Օր. շունը գնաց արև: Այս երեք բառերը մի միտք են արտայայտում, իմանում ենք որ շուն համար ասում է թէ գնաց արև:
3. Այդպիսի մի քանի բառերով արտայայտուած միտքը կոչուում է նախադասութիւն, շունը գնաց արև մի նախադասութիւն է: (ո՞վ կ'ասի մի նախադասութիւն. դ՛ու դ՛ու ել):
4. Եթէ մի քանի նախադասութիւններ միմեանց ետևից ասենք և զրեանք առանց ձայնի և զրի միջոցով բաժանելու, այն ժամանակ մտքերը կ'ըփոթենք, չենք իմանալ ո՞ւմ մասին ինչ ասուեց: Օր. շունը գնաց արև հայ ուսուցիչն է: Ենչ թէ: Այստեղ պարզ չէ միտքը, չենք իմանում, շունը զնաց տուն հաց ուտելու, թէ մենք եկել ենք հայ ուսուցիչ: Բայց եթէ ասենք և զրեանք, շունը գնաց արև. հայ ուսուցիչն է: Ենչ թէ: միտքը կ'պարզուի. կ'հասկանանք ինչ է ասում: (բացադրիչ ուրիշ օրինակներով):
5. Այն նշանները, որոնք զրուում են նախադասութիւնների, բառերի մէջերքում, որպէս զի մտքերը պարզ հասկացուեն—կոչուում են կէտեր: Կէտերը սոքա են. Վերջինէս (.), Տեղինէս (.), սարսիկէս (.), Բա՛ն ('), սպառնիչ (կ'), Ծանո՞նէս ('), չանիւր (ա):
6. Այն նշանները, որոնք զրուում են բառերի վերայ արտասանութիւնը ճիշդ անելու և խօսքը ընթանելու համար, կոչուում են նշաններ. հարմարեան նշան ('), հարցական նշան

- (ո՞ր) (') և հարմարեան նշան ('): Օր. գնաց արև և գնաց: Ի՞նչ անում գնացին: Կէտ է: (բեր ուրիշ օրինակ և) տարբերութիւնը որոշիր):
7. Իւրաքանչիւր նախադասութեան մէջ մի քանի վերայ պիտի խօսուի, ապա թէ ոչ միտք չի դուրս գալ: Օր. շունը գնաց արև. այստեղ խօսում է շան վերայ, նախադասութեան նիւթը, առարկան՝ շունն է. ո՞վ զնաց—շունը: (Ո՞վ կ'ասի մի նախադասութիւն. ո՞ւմ վերայ է խօսում. նիւթը որն է. ինչ է ասում):
8. Երբ որ իմացանք նախադասութեան մէջ ո՞ւմ վերայ են խօսում, այն ժամանակ պիտի իմանանք առարկայի վերայ ինչ են ասում. եթէ ոչ, միայն առարկան իմանալով նախադասութեան միտքը չենք հասկանալ: Օր. եթէ գրած լինէր շունը արև, միտք չէր դուրս գալ. չէինք իմանալ շունը ինչ արաւ, իսկ եթէ ասենք, շունը գնաց արև, միտք դուրս կ'գալ. գնաց—ը ցոյց է տալիս շան արածը, գործածը. իմանում ենք՝ որ շան (առարկայի) համար ասում են թէ գնաց. շունը ինչ արաւ—գնաց: (ուրիշ օրինակ ո՞վ կ'ասի):
9. Նախադասութեան մէջ այն առարկան, զործող անձը, որի վերայ որ խօսուում է, կոչուում է ենթակայ: Ի՞նչ էլ որ խօսուում ասուում է ենթակայի մասին, այն կոչուում է Ստորոգեալ: շունը գնաց արև. շունը ենթակայ է. գնաց ստորոգեալ: (ո՞վ կ'ասի մէկ նախադասութիւն. որն է ենթակայն. որն է ստորոգեալը):
10. Կարող ենք ասել այնպիսի նախադասութիւն, որի մէջ ստորոգեալ կայ, բայց ենթակայ չկայ. նախադասութիւնը էլ միտք է արտայայտում: Օր. անչառանձ է՝ որոտում է. ասում է. սրանք ենթակայ ունեն, որովհետև զրանք ենթակայի արածն են, ենթակայի գործածն են. բայց ո՞վքեր են, չ'զիտենք: Իսկ եթէ ասենք Թ՛որոս — գնում էս գնաց

այստեղ էլ ենթակայ չկայ, բայց գիտենք որ քեզ (դու) ցմայ է ասում, ենթական դու՝ Թորոսն ես. դու, Թորոս, գնում ես գնան:

11. Այն նախադասութիւնը, որի մէջ ենթակայ կայ կամ մտքով իմանում ենք ո՞վ է, կոչւում է դիմաւոր: Օր. Կիրակոսը գնաց. Թորոս, գնում էս գնա՛: Այն նախադասութիւնը, որի մէջ ենթակայ չկայ, չենք իմանում ո՞վ է ենթական, կոչւում է Անդէմ: Օր. Որպէ՛ս է, անընդհատ է ելլ. որպէ՛ս է, անընդհատ է—ստորոգեալներ են, իսկ ենթակաները անյայտ են: (Ո՞վ կասի մի դիմ. մի անդէմ նախադասութիւն ենո՞ւմն է ենթական...):

12. Նախադասութեան մէջ ենթակայ՝ ստորոգեալ նրա լինի, միտք վ՛հասկացուի, բայց մի լրացած միտք չի արտայայտուիլ: Օր. շունը գնաց, ես գրեցի սրանց մէջ միտք կայ, բայց լրացած չէ. շունը ո՞ւր գնաց, ես ի՞նչ գրեցի—յայտնի չէ, եթէ ասեմ շունը գնաց արան, ես չէրայ հայ, ես գրեցի որպէ՛ս այն ժամանակ միտքը վ՛լրանայ: (Ո՞վ կ'ասի մի... ո՞վ կ'լրացնի միտքը):

13. Նախադասութեան մէջ այն բառերը, որոնք ենթակայի գործողութեան միտքը լրացնում են, կոչւում են լրացուցիչներ. որպէս, հայ, որան լրացուցիչներ են:

(Ո՞վ կասի մի նախադասութիւն որ մի լրացուցիչ ունենայ, երկու ել):

ՊԱՐԶ և ԲԱՂԱԴՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ:

14. Կարող ենք ասել մի նախադասութիւն, որ մի միտք արտայայտի. և կարող ենք ասել մի նախադասութիւն, որ երկու կամ աւելի միտք արտայայտի: Օր. շունը գնաց արան, սա մի նախադասութիւն է մի մտքով: Շունը գնաց արան, որպէ՛ս զի հաշ յափեցի, մի նախադասութիւն է երկու մտքով: Շունը, որ գնաց արան, որպէ՛ս զի հաշ յափեցի, ի՞նչ ժամեց յետոյ որպէ՛ս մի նախադասութիւն է երեք մտքով:

15. Մի միտք արտայայտող մի նախադասութիւնը կոչւում է պարզ: Երկու և աւելի միտք արտայայտող մի նախադասութիւնը կոչւում է բաղադրեալ: Ես գնացի արան, պարզ նախադասութիւն է: Ես գնացի արան, որպէ՛ս զի հայ ուրե՛մ—բաղադրեալ նախադասութիւն է: (ո՞վ կ'ասի մի պարզ, բաղադրեալ նախադասութիւն):

16. Կարող է լինել այնպիսի պարզ նախադասութիւն, որ կազմուած լինի միայն ենթակայից և ստորոգեալից: Օր. շունը գնաց. Ստեփանը ելաւ: Կարող է լինել այնպիսի պարզ նախադասութիւն, որ կազմուած լինի ենթակայից, ստորոգեալից և լրացուցիչներից: Օր. շունը գնաց արան ինչ որպէ՛ս: Ստեփանը ելաւ ինչ ճամբ:

17. Այն պարզ նախադասութիւնը, որ բաղկացած է ենթակայից և ստորոգեալից, կոչւում է համառօտ: Այն պարզ նախադասութիւնը, որ բաղկացած է ենթակայից, ստորոգեալից և լրացուցիչներից, կոչւում է ընդարձակ: Ստեփանը ելաւ—համառօտ նախադասութիւն է: Ստեփանը ելաւ ինչ ճամբ—ընդարձակ նախադասութիւն է: (Ո՞վ կասի մի համառօտ, մի ընդարձակ նախադասութիւն):

18. Բաղադրեալ նախադասութիւններից մէկը լինում է գլխաւոր միտք պարունակող, անկախ, իսկ միւսները դրանից կախում ունեցող: Օր. Ստեփանը գնաց արան, որպէ՛ս զի հաշ յափեցի, այստեղ խօսում է Սարգսի վերայ և նորա համար ասում է գնաց տուն. գլխաւոր միտք պարունակողն էլ դա է. իսկ թէ ի՞նչու համար գնաց, դա երկրորդական հարց է և առաջինի պատճառն է ցոյց տալիս:

19. Բաղադրեալ նախադասութեան մէջ անկախ և գլխաւոր միտք պարունակողը կոչւում է Գլխաւոր նախադասութիւն, իսկ մնացած նախադասութիւնները որոնք գլխաւորի զանազան կողմերը—հանգամանքները են ցոյց տալիս, պարզաբանում, կոչւում են Երկրորդական: Ստեփանը գնաց արան, որպէ՛ս զի հաշ յափեցի, առաջինը—գլխաւորն է, երկրորդը—երկրորդական նախադասութիւն է: (ո՞վ կ'ասի մի



- Աստուծոյ ստեղծեց Արամին, այն...: Տէր Աստուծոյ, քրիի մեջ:
30. Այն նախագասութիւնը, որի մէջ գործողութիւնը հրամանի ձևով է արտայայտուած, կոչուած է Հրամայական, կոչուած է Հրամայական, հրամայական ցուցնող բառի վերայ դրուած է շեշտ. հրի վնս՝ հրամայական նախագասութիւն է:
31. Այն նախագասութիւնը, որի մէջ գործողութիւնը հարցուցումով է արտայայտուած, կոչուած է Հարցական, հարց ցուցնող բառի վերայ դրուած է հարցական նշան (պարզ). հարցէս ֆնս՝ սա հարցական նախագասութիւն է:
32. Այն նախագասութիւնը, որ գործողութիւնը պատասխանի ձևով է դրուած, կոչուած է Պատասխանական: Օր. այն, էս նորոն պեսայ: ինպսոս ծառոց մմ նորցրն
33. Այն նախագասութիւնը, ուր գործողութիւնը բացառանշուծեամբ է յայտնուած, կոչուած է Զարմացական կամ Բացառանշական: Բացառանշութիւն ցուցնող բառի վերայ դրուած է զարմացական նշան: ինչ հնսուլի քնէր էն: Սա բացառանշական նախագասութիւն է:
34. Այն նախագասութիւնը, ուր գործողութիւնը պատմելու զրոյցի ձևով է արտայայտուած, կոչուած է Պատմողական Օր. նոսս նսսած քսսսրնսսս իսսսս էին զսնսզան քսնէր, սսսս էին իէ: սս պատմողական նախագասութիւն է:
35. Այն նախագասութիւնը, ուր գործողութիւնը կատարուած է կանչելու ձևով, մէկին դիմումով, կոչուած է Կոչական: Ում դիմում է, այն կոչուած է կոչական բառ, որի վերայ դրուած է շեշտ: Տէր, քրիի մեջ: Սա կոչական նախագասութիւն է: Տէր կոչական բառ է:
36. Եթէ նախագասութեան մէջ ստորոգեալը բացասուած է, ժխտուած է, այն ժամանակ ստանում ենք Բացասական նախագասութիւն: Եթէ ստորոգեալը չի բացաս-

ւում, ստանում ենք Հաստատական նախագասութիւն: Ես չէմ գրուի. ես գնայի. ես գրուի. ես գնայի:

Հաստատական: (Ո՞վ կասի մի պատմողական, պատասխանական, հարցական, ո՞վ մի հրամայական, մի կոչական, բացասական, հաստատական նախագասութիւն, զ՞ու, մտի զ՞ու...):

37. Այսպիսով նախագասութիւնները բաժանեցինք կազմութեան, ձևին և ստորոգեալին նախելով: Ըստ կազմութեան՝ Պարզ, Բաղադրեալ, Միաւորեալ, Միջանկեալ և Յաւելեալ: Ըստ ձևի՝ Հարցական, Պատասխանական, Պատմողական, Հրամայական, Կոչական և Բացառանշական: Ըստ ստորոգեալի՝ Բացասական և Հաստատական: (Կրկնիր, Համեմատիր, օրինակներ բեր):

Ք Ա Ռ Ե Ր.

1. Եթէ խօսքի մասերը (բառերը) միացնում համաձայնեցնում էինք, մի միտք էր արտայայտուած (նախագասութիւն): Օր. Շունը ֆնայ քոն: Եթէ նոյն մասերը չմիացնենք, ստորակէտներով բաժանենք, այն ժամանակ միտք չի դուրս գալ. քոն, շուն, ֆնայ. բայց շուն—ունի առանձին նշանակութիւն, որը արտաբերելիս իմանում ենք որ կենդանու անուն է, որը տեսնում ենք, որը շարժուած է ևլ: Գնաց—իր չէ, բայց նշանակում է շարժուել, մի տեղից հեռանալ: Տուն—էլի իրի անուն է, որը տեսնում ենք, մէջում բնակուած ևլ:
2. Խօսքի այն մասերը, որոնք առանձնակի գործածուելիս նշանակութիւն ունին, կոչուած են բառեր. Օր. Գիր, խոսք, խորք. նշանակութիւն ունին և բառ են: Սոսք, ճոսք, քոն—նշանակութիւն չունին և բառ չեն:
3. Բառերը կարելի է արտասանել՝ հնչել կամ մի բերանով՝

մի անգամով, կամ շատ անգամով: Օր. Ծառ, Խոփ, Կռն.  
մի բերանով՝ միանգամով են հնչում: Տախ—տախ, Ծառ—  
Տառ, Ծառ—Ծառ, «էզան արտասանում ենք երկու անգամով՝  
երկու բերանով: Սի—բե—լի, Ծա—հար—տախ, Գր—չա—հոն—  
էրէ: անգամով: Սե—ղա—նա—տառ, Գր—ճառ—Երեւն—  
չորս անգամով եւլ:

4. Այն բառերը որոնք հնչում են մի բերանով՝ միան-  
գամով, կոչում են միավանկ. այն բառերը, որոնք  
հնչում են երկու անգամով, կոչում են երկավանկ.  
Երեք անգամով հնչող բառերը եռավանկ. բազմա-  
վանկ: Մաղ—միավանկ. Երեւն—երկավանկ. Վառապան—  
եռավանկ, Կարապետ—բազմավանկ:

բ) ՀնՁԻԻՆ—ՏԱՌ.

5. Իւրաքանչիւր մի վանկ կարելի է այնքան երկարացնել  
որ երգի նման ձայներ դուրս գայ: Օր.—Տառ Գ . . . . .  
. . . . . Դ, Ե . . . . . Զ, Է . . . . . Ը, Թ . . . . . Պ . . . . . Պ: Այնպէս որ իւրաքանչիւր  
վանկի մէջ մենք կլսենք որոշ ձայներ:

6. Վանկերի այն մասերը, որոնք բաժանում են որոշ  
ձայների, կոչում են հնչիւններ: Հնչիւնը եթէ գրենք  
թղթի վերայ, կ'ստանանք տառ, գիր: Օր. ա, ար, գ, ր . . . .  
տառեր են:

7. Հնչիւնների մի մասը երկար հնչում, երգում են: Օր.  
Օ . . . . . Ո . . . . . Ը . . . . . Ա . . . . . Ի . . . . .: Իսկ միւս մասը  
երկար չի հնչում, չի երգում. Օր. ք, գ, ր եւլ:

8. Երգուող—երկարացուող հնչիւնները կոչում են ձայնա-  
ւորներ—ձայն ունեցողներ: Օր. օ, ա, ար, ը, ի, է, է, ձայնաւոր  
տառեր են: Չ'երկարացուող—չ'երգուող հնչիւնները կոչ-  
ւում են բաղաձայն—երկայն ձայն չունեցողներ: Օր. ր, ք,  
գ, ր, ղ, ի, շ, բաղաձայն տառեր են:

9. Կան այնպիսի հնչիւններ, որոնք մի ձայն են հանում,  
բայց մի տառից մի հնչիւնից չեն բաղկացած: Օր. է՛ա,  
ճ՛ա, ի՛ա, ջ՛ա, կ՛ա, մ՛ա:

10. Այն երկտառ ձայնաւորները, որոնք մի ձայն են հանում,  
կոչւում են երկբարբառներ, եա, աւ, եւ, պ, պը—երկբար-  
բառներ են:

11. Կան այնպիսի բաղաձայներ, որոնք հնչելիս գլխաւորա-  
պէս լեզուն ենք շարժում: Օր. ար, ր, լ, ը, ւ, ար, շ, ի,  
յ, հ, գ, ն, ղ, ն: Կան այնպիսի բաղաձայներ, որոնք հնչե-  
լիս գլխաւորապէս շրթունքները ենք շարժում: Օր. ք,  
պ, ֆ, ֆ, Գ: Եւ կան այնպիսիները, որոնք հնչում են  
լեզուի և ատամների միջոցով: Օր. փ, չ, ջ, շ, ւ, ր,  
ծ, չ:

12. Լեզուի միջնորդութեամբ հնչող բաղաձայները կոչւում  
են—Լեզուային: Երթունքների միջնորդութեամբ հնչ-  
ողները—Երթնային: Ատամների միջնորդութեամբ հնչ-  
ողները—Ատամային: ար, ր, լ եւլ. լեզ. ք, ֆ.—շրթ.  
ձ. շ—եւլ. ատամային:

13. Ամէն մի վանկ կարող ենք երկարացնել, երգել. իսկ  
երկարացող—երգուող են միայն ձայնաւորները, բաղա-  
ձայները չեն երգում, ուստի ամէն մի վանկ կ'կազմուի  
այն ժամանակ, երբ մի ձայնաւոր միանայ բաղաձայնի հետ:  
Նշանակում է բառի մէջ որքան ձայնաւոր գրւում կամ  
բերանով հնչում լինի, այնքան էլ վանկ կ'լինի: Կարող է  
ա—ա—է. ուրեմն երեք վանկ է: Կա—րա—պէս: Փրկիչ,  
հնչելիս ասում են ֆըր—իչ—ը—ի, ուրեմն երկու վանկ  
կայ ֆըրիչ—բառի մէջ: Բ—տառը շատ անգամ գրելիս  
ղեղջում է, բայց հնչում արտատանելիս:

(Ո՛վ կասի մի բառ, ի՛նչու է բառ. ո՛վ կ'ասի միավանկ,  
երկավանկ, բազմավանկ բառ. ո՛վ միավանկ բառը կ'երգի,  
քանի հնչիւն կայ. ո՛վ մի երգուող տառ կ'ասի, ո՛վ մի  
չ'երգուող տառ կասի. ո՛վ մի շրթնային, ատամնային, մի  
լեզուային տառ կ'ասի):

(Ո՛վ կասի քանի տառ կայ հայոց լեզուի մէջ (38). ո՛վ  
կարգով կ'ասի ա, բ, գ, ր, է . . . .):

14. Եթէ նախադասութիւնը երկար է և պէտք է մի մասն  
անջկացնել երկրորդ տողը և անց կացողը մի բառի

կէսն է այն ժամանակ պիտի վանկերի բաժանենք բառը, և վանկը կամ վանկերը անցկացնենք, վանկը կիսել չի կարելի: Օր. Կարողեա չի կարելի բաժանել Կար—ա—ողեա, կամ Կա—րաղ—եա, այլ Կա—րա—ողեա:

գ). ՊԱՐՁ, ԲԱՐԳ, ԱԾԱՆՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ և ՅՕԴԱԿԱՊ:

15. Կարող ենք միավանկ և բազմավանկ բառերը առանձին գործածել, կամ ուրիշ բառերի հետ միացնել, կամ մասնիկ աւելացնել: Օր. հարդ. հարդակեր, հարդիայն. որին, արինաներէ, արինոս:


16. Այն բառերը, որոնք գործ են ածուում առանձին, չեն միացած բառերի հետ կամ մասնիկ չեն ընդունած, կոչուում են Պարզ: Օր. հարդ. հաս, հար, հաշի ևլ: Պարզ բառերը, եթէ միանում են ուրիշ բառերի հետ, կոչուում են Բարդ: Օր. հասն—արհաս. գործ—ա—կալ. հաղ—ա—պահ.

17. Այն բառերը որոնք իրենց սկիզբին և վերջին ընդունում են մասնիկներ—աճանցներ, կոչուում են աճանցական բառեր: Օր. մարդիկ—հարդիայն—հարդի—ա—յն. հոգի—հոգ—է—կան Գոհ—աժ—գոհ. հոգի—անհոգի. հարդիայն, հոգեկան, բժգոհ, անհոգի աճանցական բառեր են:

Աճանցը տարբերուում է բառից նրանով, որ նշանակութիւն չունի առանձին գործածուելիս, ինչպէս բառը. Օր. հարդ, հոլ, հարիս—բառեր են, որովհետև նշանակութիւն ունեն: Այն, ան, ուր, աճանց են, որովհետև առանձին գործածուելիս նշանակութիւն չունեն:

18. Բառերի սկզբում աւելացած մասնիկները կոչուում են—նախադաս աճանցներ, իսկ վերջերում աւելացածը յետադաս աճանցներ:

19. Բարդ բառեր և աճանցական բառեր կազմուելիս, երկու բառերի մէջ, բառի և աճանցի մէջ ընկնում են ձայնաւոր տառեր, որպէս զի դիւրահնչին, հեշտալուր լինի բառը: Երբեմն էլ այդպիսի տառեր չեն ընկնում, ուղղակի բառը բառի մօտ է գրուում: Օր. մարդ—որս, հիւր—ընկալ, աւազաման, հոյլհոյլ, գունդ գունդ, բերա-



նակալ, բերանվակէք, արադրնիժաց, սուքա միջանկեալ տառեր չունեն: սոցա մէջ կան տառեր—է, ա, ու ևլ. որոնք կապում են բառը՝ աճանցը արմատական բառի հետ:

20. Այն տառերը, որոնք բարդութեան և աճանցման ժամանակ բառը կամ աճանցը կապում են ուրիշ բառի հետ, կոչուում են յօդակապ. է, ու, ա—կապող տառերը—յօդակապ են: (Ո՛վ կասի մի պարզ, մի բարդ, մի աճանցեալ բառ, ո՞րն է յօդակապը):

21. Նախադասութիւնը կամ խօսքը կազմուում են բառերից ուրեմն ամէն մի բառ նախադասութեան՝ խօսքի մի մասն է կազմում: Ուստի փոխանակ ասելու բառեր, կարող ենք ասել խօսքի մասեր, բանի—մասեր, մասունք բանիներ. (բան—նշանակում է խօսք):

22. Կան այնպիսի մասունք—բանիներ (խօսքի մասեր) այսինքն բառեր, որոնք ցոյց են տալիս՝ նշանակում են իր, առարկայ: Օր. չի, փայտ, գրէ: Կան այնպիսի բառեր (մասունք—բանիներ), որոնք ցոյց են տալիս առարկայի բանի հատ լինելը, թիւը. Օր. մէկ, չորս, երկու, հինգ (փայտ ևլ): Կան այնպիսի բառեր (մասունք բանիներ), որոնք ցոյց են տալիս մի առարկայի արածը, գործողութիւնը. Օր. ես խիչի. խփելու համար պիտի մի բան, մի գործ անեմ՝ կատարեմ: Խիչի—բառը գործողութիւն է ցոյց տալիս:

23. Այստեղից երևում է, որ մասունք բանիները—բառերը տարբեր նշանակութիւններ ունեն, մի խումբ բառեր մի տեսակ նշանակութիւն ունեն, մի ուրիշ խումբ բառեր ուրիշ նշանակութիւն. այնպէս որ տասը խումբ բառեր (մասունք բանիներ) ենք տեսնում, որոնք միմեանցից տարբեր նշանակութեամբ են գործ ածուում:

24. Որպէս զի իմանանք որ բառը որ խմբին է պատկանում, պիտի հարցնենք այս բառը ինչ է ցոյց տալիս, ինչ

1004  
1642

տեսակ բառ է. և որպէս զի այդ հարցի պատասխանը ճիշդ տանք, չստանք բարդ է, պարզ է, կամ ածանցական է ևլ, բառի տեղ զործ կ'ածենք մասունք—բանի խօսքը և կհարցնենք քնն մասն բանի է օր. չէն, զորանով կիմանանք թէ չէն տասից որ խմբին պատկանելն է հարցնում:

### Գ). ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻՆԵՐ.

ա). ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ.

1. Կան այնպիսի բառեր, որոնք արտաբերելիս, իմանում ենք որ ցոյց է տալիս մի իր, մի առարկայ որ աշխարհումս կայ: Օր. ձի, կով, ասելով հասկանում ենք այն կենդանիները, որոնք մեզ մօտ պահում ենք, տեսնում ենք, բռնում շօշափում ենք, որոնք իրական աշխարհում կան: Ուրիշ օր. Աստուծո, հոգի, բարեբան, էլի անուններ են, կան աշխարհումս, բայց տեսնել, շօշափել չենք կարող, միայն մտքով ենք հասկանում, րմբռնում, միայն մեր մտաւոր աշխարհում գոյութիւն ունեն:

2. Այն առարկաները որոնք իրական աշխարհում կան, մեր հինգ զգայարաններով (տեսանելիքով, լսելիքով, շօշափելիքով, հոտոտելիքով և ճաշակելիքով) իմանում ենք, կոչում են նիւթական առարկաներ: Գրիչ, լեռնաշ, շոյ, չայն. հոտ, սիւսի, բար ևլ. նիւթական առարկաների անուններ են:

3. Այն առարկաները, որոնք մեր հինգ զգայարաններով չենք իմանում, այլ մտքով ենք միայն հասկանում, րմբռնում, կոչում են մտաւորական: Աստուծո, հրեշտակ, սեղան, սպիտակ, բար, մտաւորական առարկաների անուններ են:

4. Նիւթական առարկաներից նրանք, որոնք շունչ են քաշում, կոչում են շնչաւոր, ճարտ, կենդանի, բոյ, ծառի: Նիւթական

առարկաներից նրանք, որոնք շունչ չեն քաշում, կոչում են անշունչ առարկաներ: Օր. բար, աշ, հոգ, սեղան, 4րիչ ևլ:

5. Այդ բոլոր առարկաներին տոհմ է մի անուն, որի միջոցով միմեանց հասկացնում ենք թէ այս առարկայի վերայ ենք խօսում և ոչ այն: Ձի ասելիս հասկացնում ենք թէ կենդանու անուն ենք տալիս: Բար ասելիս— իմանում ենք մի անշունչ կարծր առարկայ:

6. Այն անունները, որոնք առարկաներին էլ չատկացրած, կոչում են Գոյականներ: Ձի—ինչ մասն բանի է, պատասխան—գոյական անուն. Ինչու է գոյական—որովհետեւ առարկայի անուն է. Ինչ տեսակ առարկայի:

(Ով կասի մի գոյական անուն, ինչու, ինչ տեսակ...:)

7. Կան այնպիսի գոյականներ, որոնք արտաբերելիս միայն մի առարկայ ենք հասկանում: Օր. Արցախի Երևան քաղաքում... Երևան: ասելով մենք հասկանում ենք Արցախում գտնուած Երևան քաղաքը, էլ ուրիշ տեղ նոյն գիրքով, նոյն բնակիչներով, նոյն անունով Երևան չկայ: Կան այնպիսի գոյականներ, որոնք արտասանելիս մեր իմացած շատ առարկաները կարող ենք հասկանալ: Օր. Բարձր մեծ է, Բարձր ասելով կարող եմ հասկանալ Երևան, Գանձակ, Երևան ևլ: Աստուծո անհատական անուն է, երկրորդ ընդհանուր անուն:

8. Այն գոյականները, որոնք անհատական անուն են նշանակում, մի առարկայ են ցուցնում, կոչում են Յատուկ: Պաշտ, Երասխ, Աստուծո յատուկ են:

9. Այն Գոյականները, որոնք ընդհանուր անուն են նշանակում, շատ միատեսակ առարկաներ են ցուցնում, կոչում են հասարակ: Մարդ, Սեղան, հասարակ են:

10. Հասարակ անուններից նրանք, որոնք խումբ, մի ամբողջութիւն են ցոյց տալիս, կոչում են հաւաքական. հոտ, փոխք, վաշտ, երամ, ջուր, հոյ, բոյ, ծառաւոր հաւաքական գոյականներ են:

11. Յատուկ անունները զրբում են զլիսատաւով: Գրեհոն,

- Ախարեան, Ասանայ շիճ, Էջմեածին. Հայաստան:
12. Մի գոյական անուն ասելիս, կարող ենք իմանալ թէ քանիսի համար է խօսում, մէկի թէ շատի: Օր. մի հարս եկաւ. եկողը մէկն է: Մարդիկ են զայլիս—եկողները շատ են, մէկից աւելի:
13. Այն գոյականները, որոնք մէկ թուով են դրուում, մէկ առարկայ են ցոյց տալիս, կոչւում են Եզակի թուով գոյականներ: Իսկ այն գոյականները, որոնք շատ առարկաներ են ցոյց տալիս, կոչւում են Յոգնակի թուով գոյականներ. հարս, չի, չարս—եղակի է, հարսի, չիեր չարսներ—յոգնակի:
14. Մի գոյական եզակի թուից յոգնակի դարձնելու համար պիտի աւելացնել եզակի բառի վերջում յետագաս մի ածանց—եր կամ ներ: Մագ—եզակի թիւ է, մագ—եր յոգնակի, գրիչ, գրիչ—ներ. խօսք—խօսք—եր, սեղան—սեղան—ներ:
15. Ներ—եր յետագաս ածանցը կոչւում է Յոգնակիացուցիչ ածանց: Միավանկ բառերի վերայ աւելցնում է եր, բազմավանկ բառերի վերայ ներ: Օր. կովեր, մագեր, ձիեր. տախտակ—ներ, թանաք—ներ, գրիչ—ներ:
16. Գոյական անունները կարող են լինել պարզ—մի արմատից բաղկացած. կարող են լինել բարդ, երկու կամ աւելի արմատներից բաղկացած, և ածանցական, երբ բառի վերայ աւելացած են յետագաս և նախագաս ածանցներ. առիւծ, որս, պարզ բառ են. որսուել, բարդ բառ է. որսուել—ածանցական է:
17. Գոյականները բարդութեան և ածանցման ժամանակ յօդակասներ են ընդունում. առիւծ—ա—սիրտ. գրք—ա—կալ. թագ—ա—ւոր: Նախագաս բացասական ածանցները և ուրիշ մի քանի բառեր յօդակասով չեն միանում բառերի հետ. Թ—գոհութիւն. ան—միտ, Կ—գետտանաէր—տան—տէր, փող—հար յօդակաս չունեն:
18. Գոյականների վերայ զանազան ածանցներ աւելանալով, միևնոյն գոյականին զանազան նշանակութիւն են տա-

- լիս: Օր. մարդ, մարդկային, մարդկութիւն, մարդա, մարդապետ, մարդու, մարդկէն, մարդուց ևլ: Այլի—վերան աւելացնենք որս ածանցը—կզառնայ այգեպահ—այգի պահող. դռնապան, բազման, պահապան. որս—ածանցը նշանակում է անող—գնացող, կատարող, առաջնորդ, ճանապարհորդ, ժառանգորդ, փոխանորդ: Ոչ—ածանցով, դպրոց, սղոյ, ծաղկոյ, վարժոյ, տեղ ցոյց տուող: Ուրիւն—ածանց, մաքրութիւն, մարդկութիւն ևլ:
19. Ու, ույ, ուլ, ում, ի, իյ, ածանցները աւելանալով գոյականների վերջերում, նոցա զանազան նշանակութիւն են տալիս. այդ ածանցները փոփոխում են գոյականների վերջաւորութիւնները: Մարդ, մարդա, մարդույ, մարդու, գործ, գործի, գործու, գործում, գործելի ևլ:
20. Գոյականի այդպիսի առանձնակի փոփոխութիւնը կոչւում է հոլով (փոփոխութիւն). հոլով կազմող ածանցները կոչւում են հոլովացուցիչ ածանցներ, որոնք են—ույ, ուլ, ում, ու, ի, իյ ևլ:
21. Գոյականի սկզբնական ձևը, որի վերայ ածանց չի աւելանում, կոչւում է ուղղական հոլով (առաջին փոփոխութիւն): Տուն է քանդուել: Ընչ է քոնդուել, որս. հարս եկաւ. ո՞վ եկաւ. հարս: Տուն, հարս անորոշ ուղղական են:
22. Եթէ ուղղական հոլովը որոշեալ է, այն ժամանակ ուղղականի վերջում աւելանում է ը—ն տառը և կոչւում է Որոշեալ ուղղական, անորոշ ուղղականից զանազանելու համար: Օր. չի եկաւ, որսուել վայր ընկաւ, չի, որսուել որոշեալ ուղղական են:
23. Անորոշ ուղղականի վերայ եթէ ի, ան, ու ածանցները աւելացնենք, այն ժամանակ կ'ստանանք գոյականի երկրորդ փոփոխութիւնը—Սեռական հոլովը, որ ցոյց է տալիս մի որ և է անուան պատկանելիութիւնը: Օր. որսուելի կէտը, հարսու պատկեր. ընչի կէտը. ում պատկերը—որսուելի, հարսու—սեռական հոլով են:
24. Սեռականի ածանցները կազմում են և երրորդ—

տրական հոլովը, որ ցոյց է տալիս գործողութեան սլափականեթիւնը: Նա ծէծի արժանի է վարդը ընծայեցի նրան. քնչի է արժանի, ո՛ւմ ընծայեցի—արժանի է, ընծայեցի գործողութիւն ցոյց տուող բառերի մօտ գրուած պատի, նրան—բառերը տրական են և ցոյց են տալիս թէ գործողութիւնը իրենց է սլափանում:

25. Անորոշ տրական հոլովի վերայ աւելանում է—ը—ն տառը և դառնում է որոշեալ: Օր. նա արժանի է այս պատիին. ես խփեցի ծուռային. պատիին, ծուռային որոշեալ տրական են:

26. Եթէ անորոշ տրականի վերջում աւելացնենք—յ—տառը, կամ որոշ դէպքերում (գ. հոլովման մէջ) ուղղականի վերջում—ից—ածանցը, այն ժամանակ կստանանք չորրորդ հոլովը—բացառականը, որը ցուցնում է թէ գործողութիւնը ո՛ւմնից է սկսւում: Ես Գրիգորից տժգոհ եմ. ես գալիս իմ Երևանից. ո՛ւմնից. ո՛րտեղից. այս, փայտից է շինած, քնչից: Երևանից, Գրիգորից, փայտից, ոչորմանից—ից—բաց. հ. են:

27. Եթէ անորոշ ուղղականի վերայ աւելացնենք—ու—ածանցը, այնժամանակ կստանանք հինգերորդ հոլովը, գործիականը. որ ցուցնում է թէ գործողութիւնը ո՛ւմնով է կատարւում: Սրով խփեցի, Պետրոսով լաղթեցի, քնչով, ո՛ւմնով: Սրով, Պետրոսով—գործիական հոլով են:

28. Անորոշ ուղղականի վերայ եթէ աւելացնենք—ու—ա—մէջ ածանցը, կ'գառնայ վեցերորդ հոլովը ներգոյականը, որ գործողութիւնը մի բանում կատարուելն է ցուցնում: Ջրով ձկներ կային. փայտով որդեր կան, Պետրոսի մէջ շատ բանէ նկատոււմ. ո՛րտեղ, քնչում, ո՛ւմնում: Փայտով, ջրով, Պետրոսով ներգոյական հոլով են: Յատուկ անունների ներգոյականները և անձ ցոյց տուող անուններիներ—աւելի ընտիր է ու—ի փոխանակ մէջ գործածել. այս մէջը չափտի շփոթել յարաբերութիւն ցոյց տուող մէջ նախադրութեան հետ:

28. Որոշեալ բացառականի, գործիականի և ներգոյականի վերջում աւելանում են—ը—ն—տառերը: Ջրովը, ջրովը, ջրիցը, որոշեալ են. ջրով, ջրով, ջրից—անորոշ:

29. Անորոշ ուղղականի նման է և եօթերորդ հոլովը—հայցականը. որոշեալ հայցականը նման է որոշեալ ուղղականին: Ես ճարտ տեսայ, ես փայտ տեսայ. քնչ: Ես փայտ տեսայ. ես էլը տեսայ, քնչը: Մարտ, փայտ, անորոշ և ճարտը, փայտը որոշեալ հայցական են:

30. Հայցականը նման է տրականին, երբ մարդկանց անունները, անձնաւորութիւն ցոյց տուող բառերը որոշեալ են: Օր. ես տեսայ հորդ. ճարտ. ճարտուն. Պետրոսի և լ: Բոլորը որոշեալ են և հայցականը—տրականի նման: Իսկ եթէ անորոշաբար գործածենք, ուղղականի նման կ'լինեն հայցականները: Օր. ես ի հայտ տեսայ, որ որդուն մահը ողբում էր: Մի հայտ—անորոշ հայց. է—ուղղականի նման

31. Այն տառերը, ածանցները որոնք եօթ տեսակ հոլովներ են կազմում, կոչւում են հոլովացուցիչ տառեր, ածանցներ, իւրաքանչիւր հոլով կազմող տառը, ածանցը նոյն հոլովի անունով է կոչւում. սեռականացուցիչ (ի, ու, ան) տրականացուցիչ (ի, ու, ան), բացառականացուցիչ (ից, ուց), գործիականացուցիչ (ով, անով), ներգոյականացուցիչ (ով, անով, մէջ):

32. Բոլոր գոյականները միևնոյն հոլովացուցիչները չունեն. մի խմբի սեռականացուցիչն է—ի, երկրորդ խմբինը—ու, երրորդինը—ան—էան: Առաջի խմբի բացառականացուցիչն է (ի)ց, միւսինը—(ու)ց: Գործիականացուցիչն է—ով: Ներգոյականացուցիչը—ու—մ: Այդ հոլովները ունեն և իրենց յոգնակիները:

33. Գոյականների այդ երեք խմբերը, որոնք տարբեր սեռականներ ունեն և փոփոխուում են թուով էլ, կոչւում են հոլովումներ:

34. Երեք հոլովումների յոգնակիները միևնոյն են, բոլորի

ուղղականը վերջանում է երկամ ներս սեռականը—ի, բաց—էյ, գործ—ու, ներգ—ու:

Ա ն ո ղ Ն Հ ո ղ Ն Ը Ն Տ

Առաջին հոլովումն. Երկրորդ հոլովումն, Երրորդ հոլովումն.

Ե Ձ Ա Կ Ի

- Ուղ. Սեղան, Հոգի, Ողորմութիւն—տուն
- Սեռ. Սեղանի, Հոգու, Ողորմութեան—տան
- Տրակ. Սեղանի, Հոգու, Ողորմութեան—տան
- Բաց. Սեղանից, Հոգուց, Ողորմութիւնից—տնից
- Գործ. Սեղանով, Հոգով, Ողորմութիւնով—տնով
- Ներգ. Սեղանում, Հոգում, Ողորմութեան մէջ—տնում
- Հաց. Սեղան, Հոգի, Ողորմութիւն—տուն

Յ Ո Պ Ն Ա Կ Ի

- Ու. Սեղաններ, Հոգիներ, Ողորմութիւններ—տներ
- Ս. Սեղանների, Հոգիների, Ողորմութիւնների—տների
- Տ. Սեղանների, Հոգիների, Ողորմութիւնների—տների
- Բ. Սեղաններից, Հոգիներից, Ողորմութիւններից—տներից
- Գ. Սեղաններով, Հոգիներով, Ողորմութիւններով—տներով
- Ն. Սեղաններում, Հոգիներում, Ողորմութիւններում—տներում
- Հ. Սեղաններ, Հոգիներ, Ողորմութիւններ—տներ

Ո Ղ Ն Ո Ղ Ն Ը Ն Տ

Ե Ձ Ա Կ Ի

- Ու. Սեղանը, Հոգին, Ողորմութիւնը—տունը
- Ս. Սեղանի(ն), Հոգու(ն), Ողորմութեան—տանը
- Տ. Սեղանին, Հոգուն, Ողորմութեանը—տանը
- Բ. Սեղանիցը, Հոգուցը, Ողորմութիւնիցը—տնիցը
- Գ. Սեղանովը, Հոգովը, Ողորմութիւնովը—տնովը
- Հ. Սեղանը, Հոգին, Ողորմութիւնը—տունը
- Ն. Սեղանումը, Հոգումը, Ողորմութեան(ը) մէջը—տանումը

Յ Ո Պ Ն Ա Կ Ի

- Ու. Սեղանները, Հոգիները, Ողորմութիւնները—տները
- Ս. Սեղանների, Հոգիների, Ողորմութիւնների—տների
- Տ. Սեղաններին, Հոգիներին, Ողորմութիւններին—տներին
- Բ. Սեղաններիցը, Հոգիներիցը, Ողորմութիւններիցը—տներիցը
- Գ. Սեղաններովը, Հոգիներովը, Ողորմութիւններովը—տներովը
- Ն. Սեղաններումը, Հոգիներումը, Ողորմութիւններումը—տներումը
- Հ. Սեղանները, Հոգիները, Ողորմութիւնները—տները
- 35. ա. Հոլովման վերայ հոլովում են բազմութիւ գոյականներ, փայտ, գործ, ասեղ, խնձոր, ծառ, թռչուն, թանաք, գիրք, տախտակ, գրչակոթ ևլ:
- 36. բ. Հոլովման պէս հոլովում են ուղղականում—ի—վերջացած բառերը. եկեղեցի, մատանի, ձի, հայելի, բանալի, Սնի, քաղաքացի, Երևանցի, կենդանի, աղանի, տանձենի ևլ: բ) Բայերի սկզբնական ձևերը—էլ—ած վերջացած բառերը բ—հոլովման վերայ են հոլովում, ուտել, կարգալ, գրել, նստել, ծեծել ևլ:
- 37. Գ—հոլովման վերայ հոլովում են բոլոր Ինչ—վերջացած բառերը բացի Յարութիւն յատուկ անունից. գրութիւն, քաջութիւն, մարդկութիւն, գործունէութիւն: Բացի Համբարձում յատուկ անունից բ). Ու՛ կամ ու՛ն վերջացած բառերը. հարցում(ն), խաւարում(ն), գրաւում(ն), դատարում(ն), օծում(ն), խոստում(ն), ուսում(ն) ևլ: գ). Այն բառերը, որոնց արմատի ն տառը զեղջուել է. նուռ(ն), դուռ(ն), մուկ(ն), եղ(ն), գառ(ն), գարուն, թոռ(ն), լեառ(ն). շատերը էլ այսպէս չեն հոլովում, այլ առաջին հոլովման պէս: դ) Ժամանակ ցոյց տուող բառերը. ձմեռ, ամառ, աշուն, օր, կէսօր, գիշեր, ժամ ևլ: Սոքա հոլովում են նաև ա. հոլովման պէս:
- 38. Ազգակցութիւն ցոյց տուող բառերը հոլովում են առանձնակի կերպով:



45. Գոյականների Հոլովման ժամակ զանազան ձայնաւոր տառեր զեղջոււմ են, դուրս են ձգուում բառից: Օր. սիրո, սեռ—սրբի, ջր—ջրի: Իսկ շատ անգամ տառը փոխուում է ուրիշ ձայնաւորի. հաշիւ, հաշուի:

46. Ի—ձայնաւորը եզակիում զուրս է ձգուում շատ անգամ. սիրո, սրբի, հոգի—հոգով, սրբեր. մեռի, մորի, մահերով, ճիւղ, ճորի, ճութով, վերի, վրից. յոգնակիում նոյնպէս զեղջոււմ է, բացի ի—վերջացած միավանկներից—կի, չի, չերով: (բայց զերբ—զերբով և ոչ զրբով, հիմք հիմքից): Ու—երկբարբառը միավանկների մէջ զեղջոււմ է. ջր—ջրի, ջրեր—ջրեր, կար—կարի, կարեր: Ուստի վերջացած բառերում զեղջոււմ են, խորտոււմ—խորտանի, խորտոււմ—խորտանի, հարցոււմ—հարցանի, կտակտոււմ—կտակտանի, հարցոււմ—հարցանի: Ի—երկբարբառը եզակիում փոխուում է ու—ի, այդչափակիում ոչ. անիւ, անուի, իսի—իսուի, հաշիւ—հաշուի, հոգի—հոգուի, բայց հովիւների, անիւների, իսիների:

47. Գոյականները եթէ վերջանում են ուստի հնչիւններով, այն ժամանակ ունենում են ու—ից յետոյ տառը. բացառութիւն են կազմում յատուկ անունները. ծառայ, փեսայ, բահանայ, դշուպ, օրհնուպ, Սահայ, Յովհաննայ, Յոսիպ:



բ) ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

1. Գոյական անունները արտաբերելիս իմանում ենք ինչ առարկայ ենք ուզում հասկացնել: Օր. չի, ծառիչ ասելով զիտենք չի, ծառիչ ինչ են. բայց արդեօք ինչպիսի են, լաւ, վատ, մեծ, փոքր, հոտաւէտ, գեղեցիկ, ևլ. այդ չենք իմանում: Իսկ եթէ ասեմք հոտաւէտ, ծառիչ, գեղեցիչ, այն ժամանակ կ'իմանանք ինչպիսի ծառիչ է, ինչպիսիչ է: 2. Այն բառերը որոնք ցոյց են տալիս գոյականների ինչպիսի լինելը, որպիսութիւնը, յատկութիւնը, կոչուում են Ածական անուն—որպիսութեան անուն: Մահու մարդ, յամա սիրուն տղայ, գեղեցիչ շոր, նոր ջուր, մահու, սիրուն, գեղեցիչ, նոր ցոյց են տալիս գոյականների որպիսութիւնը, ածականներ են:

3. Ածականները գոյականների պէս կազմութեան կողմից քիչ լինում են պարզ, բարդ և ածանցական: Մէծ, մեծամարմն, մեծաւոր, ծանր, ծանրաշարժ, ծանրագոյն: Սեւ, սեւաչեւայ, սեւագոյն, սուրճաւոր, սարսիրո, արագաշարժ, արագընթաց:

4. Ածանցները լինում են յետադաս և նախադաս բացասականներ. անխոհեմ, դժբախտ, ճահաս, անպաշտ, զիտուն, ամաչիւտ, բանաւան զօրաւոր, օլտղաւէտ, մարդկային, մարդկէնէն—ստղէնէն, արևելեան, թաղէտեան: Ստիպար

5. Կան այնպիսի ածականներ, որոնք այնպիսի յատկութիւն են ցոյց տալիս, որ հէնց իրենց է պատկանում իրենց բնութիւնից է առնուած, կարող է այդ յատկութիւնը զօրեղանալ և թուլանալ: Օր. յիմար մարդ, արաւելի յիմար, բնորոշ յիմար մարդ. մահու տուն, արաւելի մարդը և մեծաւոր մահու տուն: զմով յարուստ նայ զմով յարմարացմբ կան այնպիսի ածականներ, որոնք (յատկութիւնը) ուրիշ առարկայի հետ ունեցած յարաբերութիւն են ցոյց տալիս. ինչ նիւթիչ շինուած լինելը, արեւը, ժամանակը. որոնք զօրեղանալ և թուլանալ չեն կարող: Օր. սուրբ մտակի, արեւա-սուրբ մտակի ասել չի ընկարելի և նոյն ցոյց է տալիս սպակու ինչից շինած լինելը. դեղայի մարդ, այսպիսի

խնջոյքը ևլ:

6. Որպիսութիւն ցոյց տուող առաջին տեսակ ածականները կոչուում են Որակական. փոքր, աւելի փոքր, ամենափոքր փոքրը — իոյնստորակական ածական է:

7. Յարաբերական — որպիսութիւն ցոյց տուող ածականները կոչուում են Յարաբերական: Ազգանուն ցոյց տուող էան — էանց մանրկաւոր բառերը յարաբերական ածական են, Պ — Աւելորէան, Պ — Միստան, Յաշիբէանց — Պ: Պոյականից կազմուած — ային, էզէն, աշան, անի ածականները յարաբերական են Տարբէային, հոգեղէն, փառաստան, մարտնի, էրիւնէ-էրիւնէղէն կամ էրիւնէայ, պէշն, պէշնէշն — պէշնէայ ևլ:

8. Որակական ածականները կարող են զօրեղանալ և թուլանալ ածա երեք աստիճաններով: Օր. մեծ, աւելի մեծ, ամենամեծ, վառ, աւելի վառ, ամենավառ:

9. Այն որակական ածականները, որոնք թէև համեմատուում են ուրիշ նման յատկութիւնների հետ և ածականի սկզբնական ձևն են, աճելութիւն չեն ցոյց տալիս կոչուում են Պրական աստիճանով ածականներ: Օր. վառ, հարուստ, արագիմար, խելօք ևլ — Պրական աստիճան են: Գլխաւորապէս

10. Այն որակական ածականները, որոնք համեմատուում են իրարուրիշ նման ածականների հետ և նոցանից աւելի կամ պակաս լինելն են ցոյց տալիս, կոչուում են Բաղդատական աստիճանով ածականներ: Աւելի յեմար, (իմարագոյն) աւելի վառ, աւելի խելօք, բաղդատական աստիճան են. բաղդատականացողիչ է աւելի բառը և փոյն — ածանցը:

11. Այն որակական ածականները որոնք համեմատուում են ուրիշ նման ածականների հետ և ցոյց են տալիս իրենց գերազանցութիւնը կամ ստորութիւնը նոցանից, կոչուում են Գերազրական աստիճանով ածականներ: Գերազրականացուցիչն է ամէն, շատ ևլ: Օր. ամենափեղեցիկ, ամենամեծ, օր ամենափոքր, ամենափեղ, գերազրական աստիճան են: Գերազրականը կարող է լինել բացարձակ, երբ համեմատութիւն յատկութիւնը համեմատողից շատ բարձր կամ ցած է: Օր. ամենից փեղ. ամենից մեծ, ամենից հարուստ ևլ:

12. Ածականները դրուում են գոյականներից առաջ և չեն հորովուում, եթէ գոյականաբար են գործ ածուում, հորովուում են գոյականների նման:

13. Որոշեալ հորովման ժամանակ յօդը (ը, ն) դրուում է գոյականի վերայ, իսկ յե անորոշ յօդը ածականից առաջ: Մի շատ հարուստ. շատ հարուստ. մի անպիտան գոռ. անպիտան գոռ ևլ:

Ածականների հորովումն.

	(Անորոշ հորովում) էլ աշի	(ամենիցն)
Ուղղական	գեղեցիկ պարտէզ,	հարուստ,
Սեռական	գեղեցիկ պարտէզի,	հարստի,
Տրական	գեղեցիկ պարտէզի,	հարստի,
Բացառական	գեղեցիկ պարտէզից,	հարստից,
Գործիական	գեղեցիկ պարտէզով,	հարստով,
Ներգոյական	գեղեցիկ պարտէզում	հարստում (մէջ)
Հայցական	գեղեցիկ պարտէզ,	հարուստ,
		Յ ո գ ն ա չ է
Ուղղական	գեղեցիկ պարտէզներ,	հարուստներ,
Սեռական	պարտէզների,	հարուստների,
Տրական	պարտէզների,	հարուստների,
Բացառական	պարտէզներից,	հարուստներից,
Գործիական	պարտէզներով,	հարուստներով,
Ներգոյական	պարտէզներում,	հարուստներում,
Հայցական	պարտէզներ,	հարուստներ,
	է ո ա չ է	(Որոշեալ հորովում) յ ո գ ն ա չ է
Ու.	գեղեցիկ պարտէզը,	գեղեցիկ պարտէզները,
Ս.	պարտէզի(ն),	պարտէզների(ն),
Տ.	պարտէզին,	պարտէզներին,
Բ.	պարտէզիցը,	պարտէզներիցը,
Գ.	պարտէզովը,	պարտէզներովը,
Ն.	պարտէզումը,	պարտէզներումը,
Հ.	պարտէզը,	պարտէզները,

միջ մի Գառն ըզյգմմամարտոյոք մմ նուոյց զյգմմամբաճ.Ս .ԸԼ  
-խոյսճ նուոճա ծղոք մմ զազամարտոյոք շիյմ նուոխոյսճ  
դ) ԹՈՒՍՎՍՆ ԱՆՈՒՆ

1. նուոյց (մ. ց) ցրոյ զամանաբ մանխոյսճ յամչոցիմ .ԸԼ

1. Եթէ գոյականն անունները առանձնակի արտաբերենք, չենք իմանալ քանի առարկայի վերայ է խօսոււմ: Օր. ձի, տներ, եզ, գրքեր. իմացանք որ շատ ու քչերի համար է խօսուում, բայց քանի հատ է չգիտենք, երկու է, երեք է, չորս է. պիտի ասենք մէկ ձի, երեք տուն. չորս գիրք որ հասկանանք քանիոն է:
2. Այն բառերը, որոնք առարկաների թիւը՝ քանակը ցոյց են տալիս, կոչուում են թուական անուններ: Օր. մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, ութ, ինը, տասը, տասնը մէկ, քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, ինըսուն, հարիւր, հարիւր մէկ, երկու հարիւր, հազար, միլիոն ևլ:
3. Եթէ ուզոււմ ենք իմանալ քանի առարկայ կայ, պիտի համարենք մէկ, երկու—երեք... ևլ: Իսկ եթէ կամենոււմ ենք իմանալ որ առարկան որ տեղում որ կարգումն է, որն է առաջ, որն յետոյ, պիտի այսպէս համարենք— առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, տասերորդ, քսաներորդ, երեսներորդ, հարիւրերորդ, հազարերորդ ևլ:
4. Քանի հատ լինել ցոյց տուող թուականները կոչուում են Քանակական. դաս ցոյց տուող թուականները կոչուում են Մասական, դասականացուցիչ ածանցն է բարբ. եր—բարբ. չոր—բարբ. (բացառութիւն է մէկը, որի դասականը է առաջին և չոր մէկերորդ):
5. Եւր ածանցը թուականի վերայ տեւրանալով, չափ ցոյց տուող թուական է դարձնում, մէկանոց, երկուանոց, չորսանոց ևլ:
6. Թուականները զրոււմ են գոյականից առաջ և չեն հոլովոււմ, իսկ եթէ գոյականի տեղ են դրոււմ, առանձին են հորովոււմ գոյականների նման: ցր. յոյսայս

Հ. և Ու.	մէկ,	մի(ն),	երկու(ս),	երեք,
Տ. և Սեռ.	մէկի,	մինի,	երկուսի,	երեքի,
	Բաց. մէկից,	մինից,	երկուսից,	երեքից,
	Գործ. մէկով,	մինով,	երկուսով,	երեքով,
	Ներգ. մէկում,	մինում,	երկուսում,	երեքում,
	Յոգ.	(մէկեր,	երկուսներ,	երեքներ),

Հ. և Ուղ.	չորս,	տաս(ը),	վեցերորդ,
Տ. և Սեռ.	չորսի,	տաս(ն)ի,	վեցերորդի,
	Բաց. չորսից,	տաս(ն)ից,	վեցերորդից,
	Գործ. չորսով,	տաս(ն)ով,	վեցերորդով,
	Ներգ. չորսում,	տասնում,	վեցերորդում,
	Յոգ. չորսեր,	տասներ,	վեցերորդներ),

7. Սոցա յոգնակին ցոյց է տալիս զանազան առարկաների խմբեր, որոնցից իւրաքանչիւրը չորսերից հինգերից ևլ. պիտի բաղկացած լինի:
8. Պոյականի հետ—երեք հոգի, երեք հոգու, երեք հոգով ևլ. հազար զինուոր, հազար զինուորի, հազար զինուորից: Երկրորդ կարգ, երկրորդ կարգի, երկրորդ կարգերում. հարիւր հազարերորդ տող, հարիւր հազարերորդ տեղում:

դ) Պ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն.

1. Եթէ ունենանք մի քանի պարզ նախադասութիւններ, որոնց ենթական միւսնոյն անունը լինի, այն ժամանակ կրկնուող անունը ամէն անգամ չենք ասում, այլ դնում ենք նորա տեղը մի ուրիշ բառ: Օր. Պէրրոսը գնաց տուն, Պէրրոսը կերաւ հաց, Պէրրոսը քնեց. այլպէս չենք ասում, այլ այսպէս. Պէրրոսը գնաց տուն, նա հաց կերաւ, նա քնեց: Պէրրոսի տեղ դրոււմ է նա բառը:
2. Այն բառերը, որոնք դրոււմ են անունների տեղ կոչոււմ են դերանուններ: Օր նա գնաց. դու խմեցիր. Ռէնս կերանք ևլ. նա, դու, Ռէնս—դերանուններ են:
3. Այն դերանունը, որ դրոււմ է անձի տեղ. մարդու տեղ, կոչոււմ է անձնական դերանուն: Օր. էս, դու, նա, Ռէնս

4. Այն դերանունը, որ մի որևէ առարկայ է ցոյց տալիս, կոչուում է Յուցական: Օր. ա՛յն (մարդ) ա՛յր, ա՛յն, ա՛մ, գո՛ւ, նա՛:
5. Այն դերանունը, որ պատկանելիութիւն, ստացուածք է ցոյց տալիս, կոչուում է Ստացական: Անձնական դերանունների սեռական հօրովը ստացական է, որովհետև առարկայի պատկանելիութիւն ցոյց տուողը միայն սեռական հօրովն է: Իճ, Կո, Դեր, Յեր, Խր, նոյն ստացական են, Իճ (գիրքը), Դեր (տունը) ևլ:
6. Այն դերանունը, որ մի անուան յարաբերութիւն է ցոյց տալիս, կոչուում է յարաբերական: Պետրոսը, որք եկաւ: Որ—յարաբերական դերանուն է:
7. Այն դերանունը, որը անորոշ անունի տեղ է դրուած, կոչուում է Անորոշ: Օր. ա՛նէն, մե՛ս, ուրիշ, հման, ոչ ինչ, ոչ մէն. ոչ ոչ:
8. Այն դերանունը, որ հարցում է ցոյց տալիս, հարցնում է, կոչուում է հարցական: Օր. ո՞վ եկաւ, ո՞րն ես ասում, ո՞րտե՞ս ևլ. ո՞վ, ո՞րն, ո՞րտե՞ս—հարցական դերանուններ են:
9. Այն դերանունը, որ յատկութիւն է ցոյց տալիս, կոչուում է Որակական: Օր. այտո՞ւն, այնտո՞ւն, որտո՞ւն, նոյնտո՞ւնէրը: Այն դերանունը, որ քանակութիւն, չափ է ցոյց տալիս, կոչուում է քանակական: Օր. այսքան, նոյնքան, որքան, այդչափ, այնչափ ևլ:
10. Այն դերանունները, որոնք գոյականի հետ են դրուում, գոյականից առաջ են լինում, չեն հօրովուում. իսկ առանձին զործածուող դերանունները հօրովուում են:
11. Անձնական դերանունները իբրև որոշեալ անձինքների տեղ դրուող բառեր որոշեալ հօրովում ունեն, հայցականը տրականին նման:

Անձնական դերանուններ.

ե զ ա կ ի

Ուղ. ես,	դու,	նա,	ինքը,
Սեռ. իմ,	քո,	նրա (նորա),	իւր (իրա)
Տրակ. ինձ,	քեզ,	նրան (նորան)	իրան (իրեն)
Բաց. ինձնից,	քեզնից,	նրանից,	իրանից,
Գործ. ինձնով,	քեզնով,	նրանով,	իրանով,
Ներգ. ինձնում,	քեզնում,	նրանում,	իրանում,
Հայց. ինձ,	քեզ,	նրան,	իրան,

յ ո գ ն ա կ ի

Ուղ. մենք,	դուք,	նրանք (նոքա)	իրանք (ենք)
Սեռ. մեր,	ձեր,	նրանց,	իրանց,
Տրակ. մեզ,	ձեզ,	նրանց,	իրանց,
Բաց. մեզնից,	ձեզնից,	նրանից,	իրանից,
Գործ. մեզնով(մեզա.)	ձեզնով(զա.)	նրանցով,	իրանցով,
Ներգ. մեզնում(զա.)	ձեզնում(զա.)	նրանում,	իրանում,
Հայց. մեզ,	ձեզ,	նրանց,	իրանց.

Յուցական դերանուններ.

ե զ ա կ ի

յ ո գ ն ա կ ի

Ուղ. սա,	դա,	սրանք(սոր)	դրանք(դոր)
Սեռ. սրա(սորա)	դրա(դորա)	սրանց,	դրանց,
Տրակ. սրան(սորան)	դրան(դորան)	սրանց,	դրանց,
Բաց. սրանից,	դրանից,	սրանցից,	դրանցից,
Գործ. սրանով,	դրանով,	սրանցով,	դրանցով,
Ներգ. սրանում,	դրանում,	սրանցում,	դրանցում,
Հայց. սրան,	դրան,	սրանց,	դրանց,

12. Յուցական, այս, այդ, այն, սոյն ևլ. գոյականի հետ վարուելներուն պատճառով չեն հօրովուում. այս գիրքը. այս մարդը. այն տետրակը, առանձին գործածուելուս էլի չեն հօրովուում, այս արև, այն վերան ևլ:

13. Ստացական դերանունները եթէ գոյականի հետ են դըր-  
ւում, միշտ անփոփոխ են մնում, չեն հոլովում: Ի՞  
գիրքը. հո տները. նոր ձիերը. մեր այգիներից. չէր տնե-  
րում. իրանց սենեակներով. չէր ապարանքներով. հո դա-  
սարանում եւ:

13. Իսկ եթէ Ստացական դերանունները առանձին են գործ-  
ածւում, այն ժամանակ հոլովում են որոշեալ յօդով:

Առանց գոյականի  
եզակի

Ուղ. իմը,	քոնը,	ձերը,
Սեռ. իմի(ն)	քոնի(ն)	ձերի(ն)
Տրակ. իմին,	քոնին,	ձերին,
Բաց. իմիցը	քոնիցը	ձերիցը
Գործ. իմովը,	քոնովը,	ձերովը
Ներգ. իմում,	քոնում,	ձերում,
Հայց. իմին,	քոնին,	ձերին,

Ի ո գ ն ա կ ի

Ու. իմերը(իմոնքը)	քոները(քոնոնքը)	ձերերը(ձերոնքը)
Ս. իմերի(իմոնցը)	քոների(քոնոնցը)	ձերերի(ձերոնցը)
Տ. իմերին(իմոնցը)	քոներին(քոնոնցը)	ձերերին(ձերոնցը)
Բ. իմերից(իմոնցից)	քոներից(քոնոնցից)	ձերերից(ձերոնցից)
Գ. իմերով(իմոնցով)	քոներով(քոնոնցով)	ձերերով(ձերոնցով)
Ն. իմերում(իմոնցում)	քոներում(քոնոնցում)	ձերերում(ձերոնցում)
Հ. իմերին(իմոնցը)	քոներին(քոնոնցը)	ձերերին(ձերոնցը)

Գ ո յ ա կ ա ն ո վ.

եզակի. յոգնակի եզակի յոգնակի.

Ու. իւրը, (իրանը)	իրանցը,	մեր տունը,	մեր տները,
Ս. իրանի(ն)	իրանցի,	մեր տան,	մեր տների,
Տ. իրանին,	իրանցին,	մեր տանը,	մեր տներին,
Բ. իրանիցը	իրանցիցը,	մեր տնիցը,	մեր տներիցը,
Գ. իրանովը,	իրանցովը,	մեր տնովը,	մեր տներովը,

Ն. իրանումը, իրանցումը, մեր տնումը, մեր տներումը,  
Հ. իրանին, իրանցը, մեր տունը, մեր տները,

14 Ստացական դերանունները առանձին երկու ձևով են  
հոլովում, մէկը նշանակում է իմ ունեցածը: Օր. իմը,  
քոնը, ձերը, մերը, իւրը եւ. միւսը նշանակում է իմ  
ունեցածի(անձի) ունեցածը, որը կազմում է առաջին-  
ների սեռականից: Օր. իմինը, քոնինը, մերինը,

15. Որ եթէ գոյականի հետ է չի հոլովում. եթէ առանձին  
է, հոլովում է: Օր. որ տունը, որ տնից, որ կողմով,  
որ կողմերով եւ:

Եզակի որ, որի, որին, որից, որով, որի մէջ. Հայցական  
եթէ անձի տեղ է որին, եթէ անորոշ է, որ, յոգնակի-  
որոնք, որոնց, որոնցից, որոնցով, որոնցում:

Գոյականների երեք հոլովման պէս Հհոլովուող դերանուն-  
ների բացառականը գործ. և ներգոյականը—կազմում են  
տրականից շատ անգամ հոլովացուցիչ ածանցների առաջ  
տառը ընդունելով, ով, ում—ումնից, ումնով. ձեզ—ձեզ-  
նից, ձեզնով. դու, քեզ, քեզնով, քեզնում, քեզնից եւ:

16. Անորոշ դերանունները եթէ գոյականի հետ են վարւում,  
չեն հոլովում: Օր. մէն մարդ, մէն մարդով. մէն  
մարդում: Եթէ առանձին են գործածւում, հոլովում են:

Անորոշ դերանուններ.  
եզակի

Ու. ոչոք,	մէկմէկ,	միւսը,	ուրիշը,
Ս. ոչոքի,	իրարու,	մէկմէկու,	միւսի,
Տ. ոչոքին,	իրարու,	մէկմէկու,	միւսին,
Բ. ոչոքից,	իրարուց,	մէկմէկուց,	միւսիցը,
Գ. ոչոքով,	իրարով,	մէկմէկով,	միւսովը,
Ն. ոչոքում,	իրարում,	մէկմէկում,	միւսումը, ուրիշումը,
Հ. ոչոք,	իրար,	մէկմէկ,	միւսը, ուրիշը,



- 31. Մի քանի, մի քանիներ ևլ. հորովուում է և այսպէս մի քանիսը, մի քանիսի, ից, ով ևլ. մի քանիսներ, մի քանիսների, ից--ով ևլ:
- 22. Ստացական դերանունների տեղ ս. դ. ն. տառերը գրուում են գոյականների վերջում, ցոյց են տալիս իրը ումն է: Փոխանակ ասելու իմ գիրքը, ասում ենք գիրքս. տետրակդ (քո տետրակը) գրքերս (իմ գրքերը). գրքերներս (մեր գրքերը). գրքերդ (քո գրքերդ) գրքերներդ (նիդ)—ձեր գրքերը. գրքերնին (նրանց գրքերը). կրկնակի յոգնակիով: Ն—ը տառերը նոյն պաշտօնով եթէ վարուում են, գր-ժուարութեամբ են հասկացուում թէ նորա—ի տեղ են: Օր. ձին—իմ ձին, ձիդ—քո ձին, ձին—աւելի նշանակուում է ան ձին իբրև որոշեալ քան թէ նորա ձին. իսկ նախադասութեան մէջ հասկացուում է: Օր. խեղճ, ձին սատկեց—այսինքն նրա ձին և ոչ ան:
  - 23. Երբ դերանունները գոյականից առաջ են գրուում՝ նոցա հետ գործ են ածուում, այն ժամանակ շատ անգամ. ը-որոշեալ տառը գրուում է գոյականի վերջում: Օր. իմ գիրքը, քո տունը, մեր տները, և ոչ քո տուն, քո գիրք, մեր տներ ևլ:



ե) Բ Ո Յ.

- 1. Նախադասութեան մէջ մէկ առարկայ՝ մէկ գործող պիտի լինի որի վերայ խօսուի, բացի դրանից մի բան էլ պիտի որ գործողի արածը, գործածը ցոյց տայ: Օր. Էս գրած է՛. Էս գրած է՛. ով է գրուում. ով է քնուում—էս. Էս գործողն է, Էս վերայ է խօսուում: Ես—ի համար քնչ է ասուում. ասում է որ գրած է, գրած է, Էս—ի գործածը արածը—գնչը գրչը է: Ես—ը կլինի գործողը, գրած է՛, գրած է՛ գործողութիւն ցոյց տուող բառերը:
- 2. Այն մասունք բանիները, որոնք գործողութիւն են ցոյց տալիս, կոչուում են Բայեր: Եունը կերտ, կատուն չանկուէյ, մուկը փխտու: Կերտ—ը շան գործողութիւնն է, չանկուէյը կատուի, իսկ փխտու—մկան գործողութիւնը. կերտ, չանկուէյ, փխտու—բայ են:
- 3. Բայերի գործողութիւնը կարող է կատարուել երկու առարկաների մէջ, այսինքն գործողութիւնը կտայ գործող առարկան միւս առարկային, կամ գործողը կ'ստանայ միւս առարկայից: Օր. Լեոնը գրած է դասը: Գործողութիւնն է գրելը, գրողը Լեոնն է, գրուողը դասը. գրելու համար պէտք է մէկը՝ որ գրի, և միւսը որ գրուի, այսինքն երկու առարկայ գրող և գրուող: Տաշելու համար հարկաւոր է քաշող և քաշուող. ծեծուելու համար հարկաւոր է երկու առարկայ ծեծող և ծեծուող: (ով կասի մի բառ, որի գործողութիւն կատարողը լինի երկու հոգի, երկու առարկայ...):
- 4. Բայերի գործողութիւնը կարող է կատարուել միայն մի առարկայի մէջ և ուրիշ առարկայի վերայ չի անցնիլ: Օր. Լեոնը գրած է. գործողը—Լեոնը է. գործողութիւնը գնչը. քնելու համար բացի Լեոնից էլ ուրիշ մի առարկայ հարկաւոր չէ, Լեոնը բաւական է. գործողութիւնը Լեոնից ոչ մէկի վերայ չ'անցկացաւ, Բայց եթէ ասեմ Լեոնը գրած է հաց. մենակ որ Լեոնը լինի՝ հաց չ'լինի,

- կարող է ուտել, իհարկէ ո՛չ. բացի Աւոնից Հաց էլ է հարկաւոր ուտելու համար. այստեղ գործողութիւնը երկու առարկայի մէջ է կատարուում—Աւոնի և Հացի: Մենք արդէն գիտենք որ գործողը—ենթական է, գործողութիւնն ցոյց տուող բառը ստորոգեալ, երկրորդ առարկան լրացուցիչը: Աւոնը ուտում է Հաց. Աւոնը ենթակայ է, ուտում է—ստորոգեալ, Հաց—լրացուցիչ:
5. Երբ գործողութիւնը երկու առարկայի մէջ է կատարուում, կարող է պատահել որ ենթական (գործողը) գործողութիւնը անց կացնի երկրորդ առարկայի վերայ՝ լրացուցչի վերայ: Օր. Պետրոսը խփեց ծառային. Պետրոսը ենթակայ է, ծառան լրացուցիչ. խփեց—ը էլ գործողութիւնն ցոյց տուող բառ. ո՞վ ձեռքը բարձրացրեց և տարաւ ծառային խփեց.—Պետրոսը—ենթական. գործողութիւնը ենթակայից անցաւ երկրորդ առարկայի վերայ: (Ո՞վ կ'ասի մի այդպիսի օրինակ):
6. Երբ գործողութիւնը երկու առարկայի մէջ է կատարուում, կարող է դորա հակառակը պատահել, որ երկրորդ առարկան գործողութիւնը անցկացնի ենթակայի վերայ: Օր. էջը ծէծուեց տիրոջից. ո՞րն է ենթական—էջը, ո՞րն է երկրորդ առարկան—տէրը, ծէծուեց—ը էլ գործողութիւնն է. ո՞վ է ծէծուած—էջը, ենթական. ենթակային էջին ո՞վ է ծեծում, տէրը—երկրորդ առարկան. տիրոջից գործողութիւնը—ծեծը անցաւ էջի վերայ—ենթակայի վերայ: (Ո՞վ կ'ասի մի այսպիսի օրինակ....ևլ)
7. Այն բայերը, որոնց ցոյց տուած գործողութիւնը գլխաւորից այսինքն ենթակայից անցնում է երկրորդականի այսինքն լրացուցչի վերայ, կոչուում են ներգործական: Օր. ուսել, խփել, գրել, տաշել ևլ. ներգործական բայեր են:
8. Այն բայերը, որոնց ցոյց տուած գործողութիւնը անցնում է երկրորդական առարկայից գլխաւորի, ենթակայի վերայ, կոչուում են Կրաւորական: Օր. ուսում է, խփում է գրում է, գրուեց ևլ:
9. Այն բառերը, որոնց ցոյց տուած գործողութիւնը ուրիշի

- վերայ չէ անցնում, հէնց առարկայի մէջ է մնում, կոչուում են չէղորդական: Նստել, գնալ, քնել, յոգնել, Լուսել, շրջել ևլ.
10. Բայերի այդ երեք տեսակը կոչուում է երեք սեռ, և հարցնում է ինչ սեռի բայ է, ներգործական սեռի, կր. սեռի թէ....ևլ: Մնալ, խոստանալ, կարդացուել, խոստացուել, ասուել ևլ:
- Բայերի եղանակները
11. Բայերի ցոյց տուած գործողութիւնները զանազան ձևերով կարող են կատարուել. որոշակի, կասկածաւոր, թէականապէս, հրամայական ձևով. այդպիսի ձևերը կոչուում են եղանակներ: Օր. գնա՛ (հրամայական ձև). պիտի գնայի՞ս, ելէ՛ անցիւ չիտի, (պայմանական ձև է). ինչ որ գնա՛ս գնա՛ն, չ'գնա՛ (կասկածաւոր)՝ ես գնում եմ գնա՛ն (որոշակի):
12. Բայերի այն եղանակը, որը գործողութեան սկզբնական ձևն է, բայց գործողութեան ո՛չ թիւը, ո՛չ ժամանակը և ո՛չ ո՞վ կատարողն է ցոյց տալիս, կոչուում է Անորոշ: Օր. ուսել, խփել, գնալ, երբ, ո՞վ ևլ. անյայտ է:
13. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ գործողութիւնը կատարուում է որոշ կերպով, որոշ սահմանով, առանց կասկածանքի, կոչուում է Սահմանական: Օր. ես գնում եմ, գրեցի, պիտի գրեմ ևլ:
14. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ գործողութիւնը կատարուում է պայմանով, կոչուում է Պայմանական: Օր. ես պիտի գնայի, եթէ անձրև չկար. պիտի գնայած լինեի—եթէ....:
15. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ գործողութիւնը կասկածանքով, թէականապէս է կատարուում, կոչուում է Ստորադասական: Օր. ինչ որ գնա՛մ—ինձ ծեծիլ. ինչ որ գնայի. որ գնայած լինեմ ևլ:
16. Բայերի այն եղանակը, որը ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը կատարուում է հրամանի ձևով, կոչուում

է հրամայական: Օր. Գնա՛ տուն, է՛ն մեզ մօտ. Թ՛ Գնա՛ք և է՛:  
Բայերի ժամանակը, դէմքը և թիւը.

17. Ինչպէս ամէն գործողութիւն, նոյնպէս և բայերի գործողութիւնը կարող է կատարուել երեք ժամանակամիջոցում, կամ կատարուելիս, կամ կատարուած պրծած, կամ դեռ չկատարուած կարող է լինել: Օր. ես գրում եմ (այժմ), ես գրեցի (անցեալ), ես պիտի գրեմ (յետոյ), (Ով կ'ասի մի օրինակ....):
18. Այն ժամանակը, որը ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը այժմ է կատարուում, կոչուում է ներկայ: Այն ժամանակը որը ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը կատարուել պրծել է, կոչուում է անցեալ: Այն ժամանակը, որ ցոյց է տալիս թէ բայերի գործողութիւնը պիտի դեռ նոր կատարուի, կոչուում է ապառնի: Խփում եմ (ներկայ). խփեցի—անցեալ, պիտի խփեմ—ապառնի:
19. Բայերի գործողութիւնը կատարում է մէկը, այդ մէկը, իրան համար ասում է է՛, ում հետ խօսում է, նրան ասում է դ՛, ում վերայ խօսում է, նրան ասում է նա՛, նորա: Օր. էս խօսում եմ քեզ հետ նորա մասին: Ես կլինի առաջի անձը—դէմքը. դու (քեզ) կլինի երկրորդ անձը—դէմքը, նա նորա կլինի երրորդ անձը՝ դէմքը:
20. Առաջին անձը, խօսողը—է՛ կոչուում է առաջին դէմք. Թէ՛ յոգնակի առաջին դէմք: Երկրորդ անձը դու կոչուում է երկրորդ դէմք. դու՛ յոգնակի երկրորդ դէմք: Երրորդ անձը նա կոչուում է երրորդ դէմք. նորա՛ յոգնակի երրորդ դէմք:
21. Եթէ գործողութիւն կատարողը անյայտ է, այն ժամանակ ասում են բայը գործողից զրկուած է, դէմք չունի, դիմազուրկ է: Օր. որսորդ է, ճիւղատ է, անչիւր է, յրսորդ է և է: Դէմք չունին, դիմազուրկ են:
22. Եթէ բայի գործողութիւն կատարողն է մէկը, այն ժամանակ ասում ենք գործողութիւնը եզակի է, իսկ եթէ գործողութիւն կատարողները շատ են, ասում ենք յոգ-

նակի թուով գործողութիւն: Ես, դու, նա—ի գործողութիւնը եզակի է, Թէ՛ք, դու՛ք, նո՛րա—ի գործողութիւնը յոգնակի է, կատուն փախաւ, մկները փախան, նորա է՛նա, նա է՛նա. փախաւ, է՛նա եզակի է, փախան է՛նա—յոգնակի:

Բայերի կազմութիւնը.

23. Բայերը կազմութեան նայելով բաժանուում են երեքի, պարզ, բարդ և ածանցեալ: Գրծէ՛լ, իսկ—ս—լարէ՛լ, սո՛վարէ՛լ:
24. Պարզ կոչուում են այն բայերը, որոնց արմատի վերայ աւելացած է բայացուցիչ ածանց—ալ և էլ: Աս—ել, խփ—ել, գրծ—ել, փա—ալ, իսկ—ալ, պարզ բայեր են:
25. Բարդ կոչուում են այն բայերը, որոնք երկու կամ աւելի արմատից են բաղկացած. իսկ—ս—լարէ՛լ, էլի—փէլէ՛լ, սրբանէլէ՛լ, հանէլ սո՛վ, ի՛ծ անէլ և էլ:
26. Ածանցական բայերը նորա են կոչուում, որոնց արմատի և ածանցի մէջ դրուում են մասնիկներ և տառեր. գտ—ն—ել, մտ—յն—ել, ծեր—ան—ալ, փախ—չ—ել, կտոր—սա—ել և էլ:
27. Բայացուցիչ ածանցները—ել, ալ (երբեմն իլ) կոչուում են Լծորդներ: Իսկ բայերի վերջաւորութեան փոփոխութիւնը խոնարհումն: Խոնարհումները լինում են եղանակներով, թուով և դէմքերով:
